Ա. Զ. ԹԱՌՈՅԱՆ

ՍԵՎԱՆԻ ԱՎԱԶԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Պահպանված պատմական հուշարձանները և հնագիտական պեղումների միջոցով հայտնաբերված նյութական կուլտուրայի հարուստ ու բազմապիսի մնացորդները հաստատում են, որ հնագույն ժամանակներում Սևանի ավազանը* եղել է ոչ միայն Հայկական լեռնաշխարհի, այլև Առաջավոր Ասիայի ամենամարդաշատ և խիտ բնակեցված շրջաններից մեկը։

Հնագույն ժամանակներում, երբ մարդիկ դեռ անզոր էին որոշակի ազդեցություն գործել բնության վրա, կարող էին բնակվել երկրագնդի այն շրջաններում, որտեղ կար ապրելու համար առավել բարենպաստ պայմաններ։ Սևանի ավազանը պատկանելիս է եղել այն շրջանների թվին, որտեղ եղել են մարդու համար նյութական միջոցներ հայթայթելու մեծ հնարավորություններ։ Գեղատեսիլ լիճը իր առատ ու համեղ ձկներով, անասնապահության համար կերի անսպառ ռեսուրսները, արգավանդ հողերը, առողջարար կլիման, մաքուր ջուրը, նպաստավոր դիրքը և լեռնաշղթաների շնորհիվ արտաքին հարձակումների ավելի քիչ սպառնալիքները չէին կարող ավազանի տերիտորիան չդարձնել մարդկանց բնակության հնագույն օջախներից մեկը։

Կամո, Մարտունի, Ն. Գետաշեն, Ծովակ, Երփզլու և այլ վայրերում կատարած պեղումների ժամանակ Օր. Լալայանը հնագույն ժամանակներին, առանձնապես բրոնզե և երկաթի էպոխաներին պատկանող դամբարաններից հայտնաբերել է տավարի, ոչխարի, այծի, ձիու, շան, խոզի բազմաթիվ կմախքներ, աշխատանքային գործիքներ՝ սայլ, մանգաղ, բրոնզե երեք ժանիք, կացին, բրիչ, դանակ, զանազան օգտագործման կավամաններ, զենքեր՝ նիզակ, գուրզ, նետ և այլ առարկաներ։

Նյութական կուլտուրայի այդ մնացորդները ցույց են տալիս, որ ավազանի նախաբնակները շատ հեռավոր անցյալում ունեցել են զարգացած անասնապահություն, զբաղվել են հողագործությամբ։ Ֆրիդրիխ Էնգելսի ասույթն այն մասին, որ «Արևելյան մայր ցամաքը, այսպես կոչված հին աշխարհը, ուներ ընտելացնելու համար պետքական համարյա բոլոր կենդանիները և մշակելու համար՝ հացահատիկի պիտանի բոլոր տեսակները...»[1] ամբողջությամբ վերաբերում է նաև Հայաստանին և նրա մի մասը կազմող Սևանի ավազանին։

Հետազոտությունները հաստատում են, որ հնագույն ժամանակներում Սևանի ավազանում անասնապահությունը տարվել է կիսաքոչվորական-յայլաղային եղանակով և նստակյաց կյանքի պայմաններին համապատասխան։ Անասնապահական մթերքների վերամշակման շատ ձևեր հայտնի են եղել

---

* Սևանի ավազանն ընդգրկում է Բասարգեչարի, Կամոյի անվան, Կրասնոսելսկի, Մարտունու և Սևանի շրջանները։ Այն ունի 5325 քառ. կիլոմետր տարածություն, որից Սևանա լճի մակերեսը՝ 1314 քառ. կիլոմետր։

1 Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1953, էջ 29։

ավազանի հնագույն բնակիչներին։ «Նրանք մանր ու խոշոր եղջերավոր անասուններից ստանում էին միս, մորթի, բուրդ, կաթ, յուղ, գուցե և պանիր»[2]։

Մեր հասած հնագույն հուշարձանները վկայում են, որ առանձնապես ուրարտական էպոխայում Սևանի ավազանը ունեցել է զարգացած երկրագործություն։ Կամո քաղաքի (Նոր Բայազետ) «Բերդի գլուխ» կոչված վայրում հայտնաբերված ուրարտական թագավոր Ռուսա I-ի (VIII դար մ. թ. ա.) թողած սեպագիր արձանագրությունը հաղորդում է, որ «...այս երկիրն ամբողջ արտ ու դաշտ կանաչ, մշակված...»[3]։ Երկրագործության բարձր կուլտուրայի մասին են վկայում նաև բազմաթիվ ջրանցքների հետքերը, որոնք կառուցված են եղել Գեղամա և Վարդենիս լեռների լանջերում և այժմ էլ մեծ հետաքրքրություն են ներկայացնում։ Դրանք ծառայել են ինչպես արոտավայրերում անասուններին ջուր մատակարարելու, այնպես էլ ցանքերը ոռոգելու նպատակին։ Անասնապահությունը և ոռոգման վրա հիմնված երկրագործությունը կազմել են Սևանի ավազանի տնտեսական կյանքի հիմքը։

Հետագա տարիների ընթացքում ասիական բոլոր ժողովուրդների արշավանքների, օտարերկրյա զավթիչների անընդմեջ պատերազմների, ավերումների ու գրավումների հետևանքով կործանվեց երբեմնի բարձր զարգացման հասած Հայաստանի, այդ թվում նաև Սևանի ավազանի տնտեսությունը։ Դաշտերը և այգիները դարձան անապատ, ջրանցքները դուրս եկան շարքից, դատարկվեցին մարդաշատ քաղաքներն ու գյուղերը։

1639 թ. Հայաստանը Թուրքիայի և Պարսկաստանի միջև բաժանվելուց հետո, Սևանի ավազանը մտնում էր պարսկական տիրապետությանը ենթակա Երևանի խանության կազմի մեջ և կոչվում էր Գյոկչայի մահալ (վարչական շրջան)։ Թեև նախորդ շրջանի համեմատությամբ պարսկական տիրապետության ժամանակ գյուղատնտեսությունը որոշ չափով աշխուժացավ, բայց նա շարունակում էր ետ մնալ վարման սոցիալ-տնտեսական ձևերով, տեխնիկական բազայով և իր արդյունավետությամբ։

Ծանր էր գյուղացիների դրությունը ինչպես Երևանի խանությունում, այնպես էլ Գյոկչայի մահալում։ Նրանք անողոք շահագործման էին ենթարկվում պարսկական իշխանությունների, ունևոր դասակարգի և հոգևորականների կողմից։ Սոցիալական ճնշմանը ուղեկցում էր ազգային ճնշումը, որը հաճախ վայրենի ձևեր էր ընդունում։ Հասարակական և տնտեսական կյանքի բոլոր բնագավառներում, հատկապես հարկային և դատական գործերում, տիրապետում էր կատարյալ կամայականություն և կաշառակերություն։ «Որոշված հարկեր, տուրքեր համարյա թե չկային, ով ինչքան ուզում էր, առնում էր։ Տիրում էր արևելյան բացարձակ բռնակալություն։ Օրենք, կարգ, կանոն, հաշվապահություն՝ գոյություն չուներ։ Ժողովուրդն անմռունչ կերպով տանում էր խաների և անթիվ բեգերի ու այլ ծառայողների կամայականությունները»[4]։ Անշուշտ, այսպիսի պայմաններում գյուղատնտեսությունը վարելու ցածր ձևերից բարձրին անցնելը և ժամանակին համապատասխան այն զարգացնելը հնարավոր

---

2 Հ. Հ. Մնացականյան, Բրոնզեդարյան անասնապահության զարգացումը Սևանի ավազանում, ժողվածու, Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության պատմության, հատոր առաջին, Երևան, 1964, էջ 231։

3 Ա. Ք ա լ ա ն թ ա ր, Երկու սեպագիր արձանագրություն Ռուսա Ա-ի, Սարդուրի որդու, Երևան, 1927, էջ 33։

4 Հ. Մ ո ւ ս ա յ ե լ յ ա ն, Անդրկովկասի հողային պայմանները, Վաղարշապատ, 1910, էջ 53։

չէր։ Չկար տնտեսությունը բարձրացնելու նյութական ու բարոյական որևէ խթանիչ։

Հայ ժողովրդի պատմական ճակատագրի համար առաջադիմական մեծ նշանակություն՝ ունեցավ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին (1828 թ.)։ Պատմական այդ նշանավոր ակտը ոչ միայն խաղաղ ու ստեղծագործ աշխատանքի հնարավորություն ստեղծեց հայ ժողովրդի արևելյան հատվածի համար, խթանեց նրա տնտեսական ու կուլտուրական կյանքի աշխուժացմանը, այլև բախտորոշ նշանակություն ունեցավ ոչնչացման նոր սպառնալիքի տակ գտնվող արևմտահայ բնակչության որոշ մասին փրկելու և նրանց Արևելյան Հայաստանում բնակեցնելու համար։ Հին Բայազետի, Արծափի, Ալաշկերտի, Խոյի, Մակուի, Դիադինի և Մշո գավառներից եկած գաղթականների զգալի մասը բնակություն հաստատեց Մարտունու, Կամոյի, Բասարգեչարի, Սևանի շրջաններում, որոնց հաշվին խիստ կերպով ավելացավ ավազանի բնակչությունը։ 1831—1873 թվականներին, այսինքն՝ 42 տարվա ընթացքում Սևանի ավազանի բնակչությունը աճեց 3,4 անգամ (17,9 հազարից հասավ 59,9 հազարի), իսկ 1873—1914 թվականներին, այսինքն՝ հաջորդ 41 տարվա ընթացքում այդ աճը կազմեց 2,3 անգամ (59,9 հազարից հասավ 139 հազարի)[5]։

Հայ ժողովուրդը իր բախտը կապելով ռուս մեծ ժողովրդի հետ մեկընդմիշտ ապահովեց իր ֆիզիկական ու հոգևոր գոյությունը, հաղորդակից դարձավ ռուսական առաջավոր գիտությանը և կուլտուրային, որդեգրեց նրա հեղափոխական-ազատագրական ոգին։

Թեև ռուսական տիրապետության շրջանը իր առաջադիմությամբ և տընտեսական զարգացման մակարդակով շատ բարձր էր նախորդ շրջանների ողբերգական կյանքից, այնուամենայնիվ ավազանի տնտեսությունը շարունակում էր ետ մնալ։ Այլ կերպ էլ չէր կարող լինել արտադրության միջոցների մասնավոր սեփականության ու ցարիզմի ռեակցիոն տիրապետության շրջանում։ Սևանի ավազանը հանդիսանում էր ցարական ինքնակալության հետամնաց ծայրամասի՝ Երևանի նահանգի, ամենահետամնաց գավառներից մեկը, որտեղ մինչև սովետական կարգերի հաստատումը թագավորում էին սովը, աղքատությունը, խավարը, անգրագիտությունը, իսկ ապրելակերպում՝ նախնադարյան սովորույթները։ Նոր Բայազետի գավառի գյուղացու կյանքը սիմվոլացել էր որպես դառն աղքատության և տառապանքների օրինակ։ 1894 թ. այստեղ գյուղացիական ծխերի 29 տոկոսը անասնազուրկ էր, 34 տոկոսը չուներ բանող անասուններ, իսկ 30 տոկոսը՝ ցանքեր[6]։ Ապրուստի միջոցներ հայթայթելու նպատակով գյուղացիները թողնում էին հայրենի օջախը, ընտանիքը և հեռանում օտարության մեջ։ Նրանք աշխատանք էին որոնում Բաքվի, Գանձակի, Թիֆլիսի բորսաներում, Արարատյան դաշտավայրի, Ադրբեջանի ու Վրաստանի հարթավայրային շրջաններում։

Գյուղատնտեսության «արտադրական բաղան» աշխատանքի նախնադարյան գործիքներն էին՝ չութն ու արորը, բահը և բրիչը, կամը և երկանիվ սայ-

5 Населенные пункты и население Армянской ССР с 1831 по 1959 годы, Статистический сборник, Ереван, 1962, стр. 55.

6 Հայաստանի գյուղատնտեսությունը 40 տարում, Երևան, 1960, էջ 17։

լը, գերանդին ու փոցխը։ Գյուղացին գաղափար չուներ հանքային պարարտանյութերի, մեքենայական տեխնիկայի և էլեկտրականության մասին։

Նոր Բայազետի գավառի երկրագործությունը խիստ միակողմանի հացահատիկային էր՝ գարնանացան ցորենի և գարու արտադրության նեղ մասնագիտությամբ։ Այսպես, 1893 թ. հացահատիկային կուլտուրաները կազմում էին ամբողջ ցանքերի 98 տոկոսը, իսկ 1914 թվականին՝ 93,6 տոկոսը[7]։

Շատ ցածր էր երկրագործության ագրոտեխնիկան։ Հողը վարվում էր հիմնականում արորով, ցելեր համարյա չէին արվում, դրանք կիրառվում էին միայն կուլակային տնտեսություններում։ Հացահատիկի ցանքը կատարվում էր ձեռքով, գերազանցապես նախօրոք չմշակված հողերում, բացակայում էր սերմնաբուծությունը։ Գյուղատնտեսական վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարելու ոչ մի միջոց չկար, բացի ֆիզիկականից։ Դաշտային կրծողները շարիքի նման ամեն տարի մեծ վնաս էին հասցնում գյուղատնտեսությանը։ Պարարտացում չէր կատարվում, որովհետև գոմաղբը բնակչության միակ վառելանյութն էր։ Եղած պրիմիտիվ ու քայքայված ոռոգման ցանցով գյուղացիները մեծ դժվարությամբ կարողանում էին ոռոգել միայն բանջարանոցները և գետերի ու աղբյուրների մերձակայքի ոռոգման համար նպաստավոր դիրք ունեցող ցանքերը։

Երկրագործության ծայրահեղ միակողմանի ուղղության, խոտարույսերի և տեխնիկական կուլտուրաների բացակայության, ագրոտեխնիկայի շատ ցածր մակարդակի, ինչպես նաև արտադրությունը վարելու սոցիալ-տնտեսական հետամնաց ձևերի հետևանքով գյուղատնտեսությունը ամբողջապես կախված էր եղանակի պայմաններից և միանգամայն անօգնական էր բնական տարերքի առջև։ Մշակվող բոլոր կուլտուրաների բերքատվությունը շատ ցածր էր և անկայուն։ Ահա տվյալները.

Հացահատիկային կուլտուրաների բերքատվությունը
Նոր Բայազետի գավառում 1910—1914 թթ. (գ/հ)[8]

Տարիներ	Աշնանացան ցորեն		Գարնանացան ցորեն		Գարնանացան գարի	
	ջրովի հողերից	անջրդի հողերից	ջրովի հողերից	անջրդի հողերից	ջրովի հողերից	անջրդի հողերից
1910	2,2	1,7	2,3	2,5	2,6	2,6
1911	—	—	6,5	6,2	7,7	8,3
1912	9,6	6,1	8,2	7,2	9,3	8,8
1913	4,5	1,9	3,0	2,1	5,2	2,4
* 1914	6,9		5,3		6,4	

[7] Кавказский Календарь на 1893 г., Тифлис, 1894, стр. 170—173. «Վիճակագրական տեղեկատու», ԿՎԿ աշխատություններ, պրակ № 6, Երևան, 1925, էջ 31։

[8] Сельскохозяйственный обзор по Закавказью за 1910 г., часть II, стр. 47—51, за 1911 г., часть II, стр. 35—39, за 1912 г., часть II, стр. 31—35, за 1913 г., часть II, стр. 23—25. «Վիճակագրական տեղեկատու», ԿՎԿ աշխատություններ, պրակ № 6, Երևան, 1925, էջ 62։ Հիշատակված աղբյուրներում բերքատվությանը տրված է դեսյատինից փութ, որոնք վերածվել են հեկտարից ցենտներ։

* Բերքատվությունը ջրովի և անջրդի հողերից բերված է միասին։

Աղյուսակից երևում է, որ հինգ տարվա ընթացքում շատ թե քիչ կանոնավոր բերք է ստացվել միայն մեկ տարի։ Երկու տարի բերքատվությունը 5—7 ցենտներից չի անցել, իսկ մնացած երկու տարում բերքատվությունը տատանվել է՝ ջրովի հողերում 2—4 ցենտների, անջրդի հողերում՝ 1,5-ից 2,6 ցենտների սահմաններում։

Պարբերաբար կրկնվող անբերրիությունը չի կարելի բացատրել բացառապես կլիմայական պայմաններով։ Ցածր բերքատվությունը և նրա հաճախակի անկումը հիմնականում պայմանավորված էր գյուղատնտեսությունը ոչ ռացիոնալ վարելով, հողի գիշատիչ շահագործումով և նրա ուժերը ջլատելով, ինչպես նաև հողի արտադրողականության բարձրացման այլ միջոցառումների բացակայությամբ, այսինքն՝ այն վիճակով, որի մեջ գտնվում էր Սևանի ավազանի գյուղատնտեսությունը արտադրության միջոցների մասնավոր սեփականության և մարդու կողմից մարդու շահագործման տվյալ սոցիալական կարգերում։

Սևանի ավազանի առանց այն էլ թույլ ու հետամնաց տնտեսությունը քայքայվեց ու ծայր աստիճանի անկման հասավ առաջին համաշխարհային պատերազմի և ազգային բուրժուազիայի տխրահռչակ տիրապետության տարիներին։ Նոր Բայազետի գավառում 1919 թ., 1914 թ. համեմատությամբ ցանքատարածությունները կրճատվեցին 5,8 անգամ, խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը՝ 5,2, ոչխարներինը՝ 4,8, ձիերինը՝ 12,4 անգամ։ Խոզերը լրիվ ոչնչացվեցին։ Քայքայվել և շարքից դուրս էին եկել առանց այն էլ աղքատիկ արտադրական միջոցները և աշխատանքի գործիքները։ 1914 թ. եղած 2633 գութանից և 12490 արորից, 1919 թ. մնացել էր 1345 գութան և 2005 արոր։ Նոր Բայազետի գավառում 1919 թ. յուրաքանչյուր 100 շնչին ընկնում էր միայն 9,1 հեկտար ցանք, 6 գլուխ կով, 6,3 գլուխ բանող անասուն, 51,2 գլուխ մանր եղջերավոր անասուն, այն դեպքում, երբ 1914 թ. կազմում էր 38,2 հեկտար ցանք, 19,8 գլուխ կով, 27,5 գլուխ բանող անասուն և 175 գլուխ մանր եղջերավոր անասուն[9]։

Այդ տարիներին, երբ ամբողջ հայ ժողովուրդը ապրում էր մեծագույն ողբերգություն՝ գտնվելով տնտեսական ծանր ճգնաժամի մեջ և ֆիզիկական ոչնչացման եզրին, նրան օգնության հասան Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ազատարար հողմերը։

Սովետական կարգերի հաստատումից անմիջապես հետո Հայաստանի հեղափոխական կոմիտեն հետևողականորեն իրականացնելով Վ. Ի. Լենինի ցուցումներն այն մասին, որ «Բանվորա-գյուղացիական հեղափոխական կառավարությունն առաջին հերթին պետք է լուծի հողի հարցը»[10], ինչպես նաև ելնելով բոլշևիկների ազգարարային քաղաքականության սկզբունքներից ու աշխատավոր գյուղացիության լայն զանգվածների արմատական շահերից, 1920 թ. դեկտեմբերի 28-ին ընդունեց «Դեկրետ հողերի պետականացման մասին»։ Այդ դեկրետում ասված է. «Բանվորա-գյուղացիական ազգաբնակչության հողազուրկ և սակավահող մասը հողարաժիններով ապահովելու և գյուղատնտեսությամբ

---

9 «Վիճակագրական տեղեկատու», ԿՎՎ աշխատություններ, պրակ № 6, Երևան, 1925, էջ 66, 70—71։

10 Վ. Ի. Լենին, Բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի մասին, Երևան, 1956, էջ 506։

գրավել ցանկացողներին հողեր բաշխելու նպատակով, այլև հանրապետության բոլոր կարիքները բավարարելու համար, արքունական, նադելնի, եկեղեցական, վանքապատկան, վակուֆային, մզկիթային, իրավաբանական անձերի և մասնատիրական հողերը դառնում են Հայաստանի Խորհրդային Հանրապետության սեփականությունը»[11]։ Դրանից անմիջապես հետո ազգայնացվեցին հանրապետության ջրերը, անտառները, ընդերքը, ոռոգման ամբողջ ցանցը, ջրանցքները։ Հողի՝ գյուղատնտեսական արտադրության այդ հիմնական միջոցի պետականացմամբ մեկընդմիշտ լիկվիդացվեցին բուրժուա-կալվածատիրական հողային հարաբերությունները, աշխատավոր գյուղացիությունը ազատագրվեց կալվածատերերին, եկեղեցուն, կուլակներին, վանքերին վարձակալական վճարումներ և տուրքեր տալու ծանր բեռից, նրանց շահագործումից։ Հողօգտագործման բնագավառում եղած անհավասարությունը վերացնելու նպատակով 1922 թ. ինչպես ամբողջ Հայաստանում, այնպես էլ Սևանի ավազանում անցկացվեց հողաշինարարություն, որի ընթացքում հաշվի էին առնըվում բոլոր հողերը և դրանք ըստ շնչերի համասար հիմունքներով բաժանվում էին գյուղացիական տնտեսություններին։ Այդ միջոցառման շնորհիվ Սևանի ավազանում խիստ կերպով նվազեց հողազուրկ տնտեսությունների թիվը։ Ավազանի ներկա տերիտորիայի սահմաններում 1926 թ. ավելի 21 հազար գյուղացիական անհատական տնտեսություններից հող չունեցող մնացել էր միայն 490 տնտեսություն[12], կամ 2,3 տոկոսը։ Փաստորեն վերացվել էր հողազրկությունը։ Հող ստանալուց հետո գյուղացիները զգացին, որ իրենք հնարավորություն չունեն այն արդյունավետ օգտագործելու, որովհետև նրանց ճնշող մասը չուներ գյուղատնտեսական գործիքներ, լծկան անասուններ, սերմացու և պատահական չէր, որ չքավոր գյուղացիների բաժնեհողերի զգալի մասը կամ մնում էր անմշակ, կամ էլ չնչին վարձով օգտագործվում էր կուլակային տնտեսությունների կողմից։

1924 թ. վիճակագրական տվյալներով Նոր Բայազետի գավառի 57,3 հազար հեկտար վարելահողի մշակման համար կար միայն 962 գութան, 6047 արոր։ Գյուղացիական տնտեսությունների 27,1 տոկոսը չուներ անասուն, իսկ 61,2 տոկոսը՝ գութան կամ արոր[13]։ Աղքատ տնտեսությունների թիվը առանձնապես շատ էր Մարտունու և Բասարգեչարի շրջանների լեռնային և գաղթականներով բնակեցված գյուղերում։

Այս ծանր տարիներին Սովետական Ռուսաստանը և եղբայրական մյուս հանրապետությունները բոլոր տեսակի հնարավոր օգնություն էին ցույց տալիս Հայաստանին՝ նրա տնտեսական քայքայվածությունը արագ կերպով վերացնելու համար։ Վ. Ի. Լենինի անմիջական հանձնարարությամբ 1920 թ. դեկտեմբերին Սովետական Ռուսաստանի կառավարությունը Սովետական Հայաստանին բաց թողեց 3 միլիարդ ռուբլու թղթադրամ, իսկ 1921 թ.՝ 3,5 միլիոն ռուբլի ոսկի դրամ, Սովետական Հայաստան էին ուղարկվում պարենային հացահատիկ, սերմացու, հագուստեղեն, գյուղատնտեսական գործիքներ և այլն[14]։

---

11 ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ առաջին, Էջմիածին, 1921, էջ 31։

12 «Խորհրդային Հայաստանը թվերով», վիճակագրական տեղեկատու (1923—1927), Երևան, 1928, էջ 59—61։

13 «Վիճակագրական տեղեկատու», ԿՎՎ աշխատություններ, պրակ N 6, Երևան, 1925, էջ 57, 74, 78։

14 «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1963, էջ 62։

Դրանից, որպես օգնություն, մեծ բաժին էր հանվում Սևանի ավազանի բնակչություններ։ Միայն 1925 թ. Նոր Բայազետի գավառային գործկոմի խնդրանքով հանրապետության ժողկոմսովետը Մարտունու և Բասարգեչարի շրջանների 33 գյուղերի 1240 չքավոր գյուղացիական տնտեսությունների վիճակը բարելավելու համար օգնության կարգով բաց թողեց 32,5 հազար ռուբլի[15]։ Դժվարությունները մեծ էին, սակայն սովետական իշխանության ցույց տված ֆինանսական, նյութական և տեխնիկական օգնության շնորհիվ Նոր Բայազետի գավառի աշխատավորությունը արագ կերպով հաղթահարեց այդ դժվարությունները։ Վերացվեցին սովն ու համաճարակը, վերականգնվեց և նորմալ ընթացքի մեջ դրվեց տնտեսական կյանքը։

Վերականգնման առաջին շրջանում հատուկ ուշադրություն էր դարձվում անասունների գլխաքանակի ավելացմանը և գյուղատնտեսական կուլտուրաների ցանքատարածությունների ընդարձակմանը։ 1926 թ. խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը արդեն զգալիորեն անցել էր նախապատերազմյան մակարդակը, իսկ մանր եղջերավոր անասուններինը կազմում էր նախապատերազմյան մակարդակի մոտ 80 տոկոսը։ Այդ տարիներին հիմնականում վերականգնվեց սոռոմման ցանքը, որը ամբողջապես քայքայվել էր պատերազմի տարիներին, ջրովի հողերի քանակը հասցվեց 21,9 հազար հեկտարի։

Տնտեսության վերականգնման ընթացքի հետ պոկասեց անցյալից ժառանգած աղքատությունը, աշխատավոր գյուղացիությունը հիմնականում ապահովվեց արտադրության միջոցներով, սերմացուով, անասուններով։ Նա դարձավ հողի հիմնական մշակողը գյուղում։

Սովետական իշխանությունը աշխատավոր գյուղացիությանը դուրս էր բերել ազատ համակեցության ուղի։ Քայքայված տնտեսությունը վերականգնելուց և վերքերը բուժելուց հետո գյուղացիությունը այլևս չէր ուզում հին ձևով ապրել։ Տնտեսության նախապատերազմյան մակարդակը, որը ցարական Ռուսաստանի հետամնաց պրովինցիայի ցածր մակարդակն էր, և արտադրության կազմակերպման հին եղանակը, այլևս չէր բավարարում աշխատավորական զանգվածներին, սոցիալիզմի կառուցման պահանջներին։ Փոշիացած, մանր գյուղացիական անհատական տնտեսությունների սիստեմը մնում էր անարտադրողական, կլանում էր աշխատավորության ուժերը, խոչընդոտում էր գյուղատնտեսության մեջ գիտության ներդրմանը և տեխնիկայի կիրառմանը, ի վիճակի չէր փրկելու գյուղացիությանը աղքատությունից ու քաղցից։

Երկրի ինդուստրացման բազայի վրա, և երբ արդեն օրինակելի սոցիալիստական տնտեսությունների ու կոոպերատիվ ընկերությունների փորձով գյուղացիական լայն զանգվածները գործնականորեն համոզվեցին մանր փոշիացած անհատական տնտեսությունների անօգտավետ ու անարդյունավետ լինելու մեջ և երբ նրանց առջև ինքը՝ կյանքը առաջ քաշեց հողի հանրային մշակմանը անցնելու անհրաժեշտությունը, սկսվեց մասսայական կոլտնտեսային շարժումը։ Սոցիալիստական վերակառուցման ենթարկվեց գյուղատնտեսությունը, որը Սևանի ավազանի շրջաններում սկսվեց 1930 թ. և հիմնականում ավարտվեց 1936 թ.։

---

15 Գ. Վ. Շ ա հ ո յ ա ն, Սոցիալիստական հողօգտագործումը Հայաստանում 1920—1929 թթ., Երևան՝ 1962, էջ 14—15։

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման շնորհիվ արմատական շրջադարձ կատարվեց գյուղի հասարակական հարաբերությունների ու դասակարգային ուժերի փոխհարաբերության մեջ։ Հանրայնացվեցին գյուղատնտեսության արտադրական միջոցները և գործիքները, հանձինս ՄՏ կայանների ուժեղացվեց և ինդուստրիալ հիմքերի վրա դրվեց գյուղատնտեսության տեխնիկական բազան։ Լիկվիդացվեց կուլակությունը որպես դասակարգ, անհետացավ գյուղի շերտավորումը։ Գյուղացիության տարբեր սոցիալական խմբերի փոխարեն հանդես եկավ միատարր կոլտնտեսային գյուղացիությունը։ Սոցիալիստական հիմքերի վրա դրվեցին և ագրոարային շինարարության տարբեր վայրերում կատարելագործվեցին գյուղատնտեսության պլանավորումը, նյութա-տեխնիկական մատակարարումը, ֆինանսավորումը, վարկավորումը և նրա արտադրանքի իրացումը։ Իրականացվեց ըստ աշխատանքի վարձատրության սկզբունքը։

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը, որը հանդիսանում է Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ծնունդը, միակ ճիշտ ուղին էր աշխատավոր գյուղացիությանը կարճ ժամանակամիջոցում նախնադարյան հետամնացությունից ու աղքատությունից բարձր առաջադիմության և բարեկեցիկ կյանքի հասնելու համար։ Դրա փայլուն օրինակ կարող է ծառայել Սևանի ավազանը։

Անցած 47 տարիների ընթացքում արմատապես փոխվել է ավազանի պատկերը։ Աղքատությունը և հետամնացությունը թաղվել են անցյալի ծալքերում։ Վերակառուցվել ու բարեկարգվել են բոլոր գյուղերը, նախկին գետնափոր տների փոխարեն ներկայումս ամենուրեք բարձրացել են նորակառույց լուսավոր բնակարանների, դպրոցների, հիվանդանոցների, ակումբների, կինոթատրոնների քարակերտ բարձրահարկ շենքերը։ Ավազանի տերիտորիան այսօր ծածկված է խճուղային ճանապարհների, էլեկտրահաղորդման և կապի գծերի, ջրանցքների խիտ ցանցով։ Էլեկտրիֆիկացված են ավազանի բոլոր բնակավայրերը, ռադիոն և հեռուստատեսությունը դարձել են բնակչության կենցաղի անբաժանելի մասը։

Սովետական իշխանության տարիներին Սևանի ավազանում լայն զարգացում են ստացել գյուղատնտեսության բոլոր ճյուղերը։ 1925 թ. համեմատությամբ գյուղատնտեսական կուլտուրաների ցանքատարածությունը բոլոր կատեգորիայի տնտեսություններում ավելացել է ավելի քան 34 հազար հեկտարով և այժմ կազմում է մոտ 74 հազար հեկտար։ Դաշտային կերարտադրության ինտենսիվացման և կերի բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման բազայի վրա զարգանում է ավազանի գյուղատնտեսության առաջատար ճյուղը՝ անասնապահությունը, որը տալիս է գյուղատնտեսության ամբողջ արտադրանքի կեսից ավելին։ 1966 թ. ավազանի բոլոր կատեգորիայի տնտեսություններում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 1919 թ. համեմատությամբ աճել է ավելի քան 9 անգամ, իսկ 1950 թ. համեմատությամբ՝ 28 տոկոսով, կովերի գլխաքանակը համապատասխանաբար՝ 8,3 և 2 անգամ, ոչխարներինը՝ 9,5 անգամ և 87 տոկոսով։ Մեծ փոփոխություն է կատարվել անասնապահության որակական դուցանիշների մեջ՝ կրկնապատկվել է նրանց մթերատվությունը, բարձրացել է սերնդատվությունը, բարելավվել է անասունների ցեղայնությունը։

Սևանի ավազանի պայմաններում, որտեղ քիչ է բնական խոնավությունը,

գյուղատնտեսությունը ինտենսիվացնելու կարևոր միջոցներից մեկը ոռոգումն է։ Սովետական իշխանության տարիներին ավազանում կառուցվել և գործարկվել են Բասարգեչարի շրջանի Մազրայի և Զոդի, Մարտունու շրջանի Գետաշենի և Երանոսի, Կամոյի շրջանի Նորադուզի և Սաբուխանի ջրանցքները և տասնյակ ջրհան կայաններ։ Վերակառուցվել են Եսիրի, Հորգլուլի, Դաշտոյի ձորի (Մարտունու շրջան), Տաշքենդի, Ն. Զաղալուի, Դոշի (Բասարգեչարի շրջան), Զայլախի, Աղի, Կուտուզի (Կամոյի շրջան) և այլ հինավուրց ջրանցքները։ Կոլտնտեսությունները և սովխոզները իրենց միջոցներով նույնպես կառուցել են շատ ջրանցքներ և ջրհան կայաններ։ Ջրաշինարարական աշխատանքների ծավալման շնորհիվ ոռոգելի հողատարածությունները նախասովետական շրջանի համեմատությամբ կրկնապատկվել են և ներկայումս կազմում են մոտ 39 հազար հեկտար, ջրարբիացվել է մոտ 30 հազար հեկտար արոտավայր, չորացվել են ավելի քան 3 հազար հեկտար ճահիճներ։

Ոռոգման զարգացման շնորհիվ արմատապես փոխվել է ավազանի հողագործության նախկինում եղած միակողմանի-ղուտ հացահատիկային ուղղությունը։ Կոլտնտեսություններում և սովխոզներում ներկայումս մշակվում են այնպիսի բարձրարժեք կուլտուրաներ, ինչպիսիք են՝ ծխախոտը, որը տալիս է գյուղատնտեսության ամբողջ համախառն արտադրանքի 24 և դրամական եկամուտների 40 տոկոսը, աշնանացան և գարնանացան ցորենների մի քանի բերքատու սորտերը, կերային, սիլոսային, բանջարանոցային մի շարք նոր կուլտուրաները, պտուղների բազմաթիվ արժեքավոր տեսակները և այլն։

Գյուղատնտեսության նյութա-տեխնիկական բազայի ամրապնդումը կոմունիստական կուսակցության տնտեսական քաղաքականության արմատական հարցերից մեկն է։ Դրա վառ արտահայտությունն է հանդիսանում կոլտնտեսությունների և սովխոզների հագեցումը ժամանակակից գյուղատնտեսական տեխնիկայով և տրանսպորտի միջոցներով։ Սևանի ավազանում գյուղատնտեսության տեխնիկական զինվածության այժմյան մակարդակի մասին պարզ պատկերացում կազմելու համար, նկատենք, որ 1925 թ. Նոր Բայազետի գավառում, որի կազմի մեջ մտնում էին ներկայիս Բասարգեչարի, Կամոյի անվան, Մարտունու և Սևանի շրջանները, կար ընդամենը 4 տրակտոր, 3 խոտհընձիչ մեքենա, 3 սերմացանիչ, 1093 գութան[16]։ Ամբողջ գավառի գյուղացիական տնտեսությունների 80 տոկոսը հողը մշակում էր արորով և միայն 20 տոկոսը՝ քարշող ուժի գութաններով։ Միակ փոխադրամիջոցները սայլերն էին։

Ներկայումս ավազանի կոլտնտեսություններում և սովխոզներում աշխատում են տարբեր մարկայի 943 տրակտոր, 314 հացահատիկային կոմբայն, 900 բեռնատար ավտոմեքենա, հարյուրավոր տրակտորային գութաններ, շարքացաններ, կուլտիվատորներ, էլեկտրաշարժիչներ և այլ մեքենաներ։ 1950 թ. համեմատությամբ, ավազանի հանրային տնտեսությունների տրակտորային պարկը ավելացել է մոտ 7 անգամ, հացահատիկային կոմբայնների թիվը՝ 4,8 և բեռնատար ավտոմեքենաներինը՝ 10 անգամ[17]։ Յուրաքանչյուր 15 ձիաուժա-

16 «Խորհրդային Հայաստանը թվերով», վիճակագրական տեղեկատու 1923—1927, Երևան, 1928, էջ 75։

17 ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և Սոց. շինարարության ՊԿԱ, Հայկ. ՍՍՀ ՎՎ գյուղբաժին, ֆոնդ 163, ցուցակ 21, գործ 566, 567, 571, 572, 574. Կոլտնտեսությունների և սովխոզների 1967 թվականի հունվարի 1-ի կոյքագրման արդյունքները տարեկան հաշվետվություններից, Հայկ. ՍՍՀ ԿՎՎ գյուղատնտեսական բաժին։

նոց տրակտորին ընկնում է ընդամենը 41 հեկտար վարելահող, իսկ յուրաքանչյուր կոմբայնին՝ 134 հեկտար հացահատիկի ցանքատարածություն։ Ավաղանի կոլտնտեսություններն ու սովխոզները տարեկան օգտագործում են 19—20 միլիոն կիլովատ ժամ էլեկտրաէներգիա, այսինքն՝ այնքան, ինչքան արտադրվել է ամբողջ Հայաստանում 1928 թ.[18]։

Մեքենա-տրակտորային պարկի հզորացումը նպաստեց գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման մակարդակի բարձրացմանը։ Արդեն վերջին տարիներին ավաղանի կոլտնտեսություններում և սովխոզներում ամբողջությամբ մեքենայացված է տրակտորահարմար հողերի խոր վարի, կրկնավարի, կուլտիվացիայի, փոցխման, հացահատիկային կուլտուրաների ցանքի աշխատանքները, ինչպես նաև ոչխարների խուզը։ Հացահատիկային կուլտուրաների բերքահավաքի 90 տոկոսը, իսկ Բասարգեչարի, Կամոյի անվան, Սևանի շրջաններում՝ 98—100 տոկոսը կատարվում է կոմբայններով։

Նախասովետական շրջանում Սևանի ավաղանի բնակչությունը վարում էր տիպիկ նատուրալ տնտեսություն։ Արդյունաբերական մի քանի անհրաժեշտ ապրանքների՝ աղի, լուցկու, ասեղի, թելի վաճառքը կատարվում էր միայն բերքահավաքի ամիսներին՝ շրջիկ առևտրականների կողմից, որոնք տանում էին գյուղացու բերքի զգալի մասը։

Լինելով բացառապես գյուղատնտեսական շրջան, Սևանի ավաղանում, բացի մի քանի ձիթհանքերից և անհատ արհեստավորներից՝ դարբիններից ու փայտագործներից, չկար ոչ մի շատ թե քիչ կենտրոնացված արտադրական ձեռնարկություն։ Բնակչությունը զրկված էր քաղաքների և հարևան շրջանների հետ հաղորդակից լինելու ամենաչնչին միջոցներից ու հնարավորություններից։ Ճանապարհները գտնվում էին անմխիթար վիճակի մեջ, չկար հեռախոս։

Սովետական իշխանության տարիներին Հայաստանի արդյունաբերության հզոր վերելքի և նրա տերիտորիալ տեղաբաշխումը բարելավելու շնորհիվ Սևանի ավաղանը դարձել է հանրապետության կարևոր արդյունաբերական շրջաններից մեկը։ Ներկայումս ավաղանում գործում են 44 արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք տարեկան տալիս են ավելի քան 22 միլիոն ռուբլու արտադրանք։ Առանձնապես նշանավոր են Կամո քաղաքի կարելի, էլեկտրատեխնիկական, սարքաշինական, ավտովերանորոգման, Սևան քաղաքի գործադրվող սարքերի, ապակյա էլեկտրամեկուսիչների գործարանները, Կամոյի տրիկոտաժի, կարի, կոշիկի, կահույքի ֆաբրիկաները, գյուղատնտեսական մթերքների վերամշակման տասնյակ խոշոր այլ ձեռնարկություններ։

Հանրապետական մասնագիտացման մեջ Սևանի ավաղանը առանձնացվում է որպես զարգացած կաթնարդյունաբերության շրջան։ Այստեղ արտադրվում են բարձրորակ կարագ, բրինզա և չանախ պանիրներ, որոնք լայն ընդունելություն են գտնում հանրապետության բնակչության մեջ։ Եթե մինչև յոթնամյակը ավաղանում զարգանում էր հիմնականում գյուղատնտեսական մթերքների վերամշակման արդյունաբերությունը, ապա յոթնամյակի տարիներին և ներկայումս այդ հիմնական ճյուղի հետ միասին արագ թափով զարգանում են նաև արդյունաբերության այնպիսի առաջավոր ճյուղեր, ինչպիսիք

---

18 «Народное хозяйство Армянской ССР», статистический сборник, Ереван, 1957 г., стр. 30. *Կոլտնտեսությունների և սովխոզների տարեկան հաշվետվություններ, 1965 և 1966 թթ., Հայկ. ՍՍՀ ԿՎՎ գյուղատնտեսական բաժին։*

են՝ էլեկտրատեխնիկական, սարքաշինական և լեռնահանքային արդյունաբերություններ։

Երրեմնի հետամնաց Սևանի ավազանը այսօր երկրին տալիս է գործադրվող էլեկտրական ճշգրիտ սարքեր, կաբել, ապակյա էլեկտրամեկուսիչներ, ապակեթել, կահույք, կոշիկ, հագուստեղեն, գորգեր, հանքային ջրեր, պահածոներ, պանիր, յուղ և այլն։ «Կամո» և «Սևան» մակնիշ կրող շատ ապրանքներ արտահանվում են արտասահմանյան մի շարք երկրներ, այդ թվում ԳԴՀ, Չեխոսլովակիա, Բուլղարիա, Հարավսլավիա, ՄԺՀ, Կուբա և այլուր։

Էլեկտրիֆիկացված և ռադիոֆիկացված են Սևանի ավազանի բոլոր բնակավայրերը։ Էլեկտրական բարձր լարման դիծ է անցնում Սևանից մինչև Բասարգեչար, որի միջով ավազանի բոլոր գյուղերն ու քաղաքները, կոլտնտեսություններն ու սովխոզները անխափան կերպով էլեկտրաէներգիա են ստանում պետական էլեկտրասիստեմներից։ Էլեկտրաէներգիան լայնորեն օգտագործվում է գյուղատնտեսական արդյունաբերության մեջ և կենցաղում։

Մարդու առողջության պահպանումը հանդիսանում է սովետական պետության հոգատարության առարկան։ Եթե սովետական կարգերի հաստատման առաջին տարիներին Նոր Բայազետի գավառում կային միայն մեկական հիվանդանոց, բուժարան և դեղատուն և 4 բուժկայաններ, որոնցում աշխատում էին 5 բժիշկ, մեկական մանկարարձուհի և դեղագործ[19], ապա այժմ ավազանի գյուղերում և քաղաքներում գործում են 140 բժշկական հիմնարկներ, որից 29-ը բուժման ժամանակակից սարքավորումներով և ապարատներով հագեցված հիվանդանոցներ՝ 1360 մահճակալով։ Ավազանի բուժ-սանիտարական հիմնարկություններում աշխատում են ավելի քան 160 բժիշկ և 700 հոգի միջին բուժաշխատողներ։ Անհրաժեշտության դեպքում բնակչությունը բարձրորակ բուժում է ստանում նաև հանրապետության ու Միության խոշոր քաղաքներում և սանատորիաներում։ Բասարգեչարի շրջկենտրոնում գործում է բժշկական տեխնիկում, որը առողջապահական հիմնարկներին ապահովում է միջին բուժաշխատողներով։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության տված պտուղները, թերևս, ավելի շատ են ավազանի բնակչության կուլտուրական կյանքում։ Երրեմնի անգրագիտության և խավարի մեջ խարխափող, լեռների մեջ պարփակված ծայրամասային գավառը, այսօր դարձել է համատարած գրագիտության մի շրջան, որի բարեշեն գյուղերն ու քաղաքները ծածկված են դպրոցների, ակումբների, գրադարանների և կինոթատրոնների խիտ ցանցով։

Եթե 1923—24 ուսումնական տարում Նոր Բայազետի գավառի առաջին աստիճանի 48 և երկրորդ աստիճանի մեկ դպրոցներում սովորում էին 4076 աշակերտ, իսկ երեխաների ուսուցման ու դաստիարակության գործով զբաղվում էին միայն 95 ուսուցիչ[20], ապա ներկայումս ավազանի 1.7 հանրակրթական դպրոցներում սովորում են ավելի քան 53 հազար աշակերտ, այսինքն՝ ամբողջ բնակչության 28 տոկոսը։ Ավազանի բոլոր շրջաններում իրականացված է 8-ամյա պարտադիր ուսուցումը։ Այսօր մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործով զբաղված են ավելի շատ ուսուցիչներ, քան ավազանում եղել են աշակերտներ նախասովետական շրջանում։

---

19 Վիճակագրական տեղեկատու, ԿՎՎ աշխատություններ, պրակ № 6, Երևան, 1935, էջ 238—239։

20 Նույն տեղում, էջ 194—195։

Սովետական կարգերի հաստատման առաջին տարիներին Նոր Բայազետի գավառում եղել է ընդամենը 2 գրադարան, 28 խրճիթ-ընթերցարան և 5 ակումբ։ Ներկայումս ավազանի գյուղերում և քաղաքներում գործում են 117 գրադարան՝ ավելի քան 700 հազար կտոր գրքային ֆոնդով, 82 ակումբ, 14 կուլտուրայի տուն և կուլտուր-լուսավորական այլ հիմնարկներ, որոնց միջոցով ավազանի բնակչությունը մայրենի և եղբայրական ժողովուրդների լեզուներով հաղորդակից է լինում մարդկային մտքի նվաճումներին։

Իրավամբ մեծ են Սևանի ավազանի այսօրվա հաջողությունները, բայց ավելի վիթխարի կլինեն նրա վաղվա նվաճումները, նրա հեռանկարները։

Ընթացիկ հնգամյակի տարիներին բարձր զարգացման կհասնեն ավազանի գյուղատնտեսության բոլոր ճյուղերը[21]։

Ավազանի սակավահողության պայմաններում գյուղատնտեսության հետագա վերելքի գործում առանձնապես կարևոր նշանակություն ունի հողի գյուղատնտեսական արտադրության այդ հիմնական միջոցի արդյունավետ ու լրիվ օգտագործումը։ Այդ նպատակով լուրջ ուշադրություն է դարձվելու ամեն մի հեկտար հողի բերրիությունը բարձրացնելու կոմպլեքս միջոցառումների անցկացման վրա։ Նախատեսվում է ջրարբիացնել մոտ 30 հազար հեկտար արոտավայր, բնական խոտհարքներից 10,8 հազար հեկտարի վրա կատարել բարելավում, դաշտապաշտպան անտառաշերտ և հակաէրոզիոն անտառապատում անցկացնել 2,4 հազար հեկտարի վրա, արհատական բարելավման միջոցով 9,7 հազար հեկտար արոտավայր վերածել խոտհարքի և այլն[22]։

Հնգամյակի տարիներին հացահատիկի միջին տարեկան արտադրությունը, նախորդ հինգ տարվա միջինի համեմատությամբ, աճելու է 22 տոկոսով, ծխախոտինը՝ 31, կարտոֆիլինը՝ 54, բանջարեղենինը՝ 41, բազմամյա խոտաբույսերինը՝ 55 տոկոսով։ Մեծ խնդիրներ են լուծվելու նաև անասնապահության զարգացման բնագավառում։ Հնգամյակի վերջին տարում, 1965 թ. համեմատությամբ, մսի արտադրությունը ավելանալու է 14 տոկոսով, կաթինը՝ 28,5, ձվինը՝ 43, բրդինը՝ 28,3 տոկոսով։

Գյուղատնտեսության զարգացման հնգամյա առաջադրանքների կատարումը ապահովվում է հանրային տնտեսություններին մեքենայացման տեխնիկայի, քիմիական պարարտանյութերի և շինանյութերի վիթխարի մատակարարումով։ Մինչև 1970 թ. պետությունը ավազանի հանրային տնտեսություններին կմատակարարի տարբեր մարկայի 1311 տրակտոր, 295 հացահատիկային կոմբայն, 613 բեռնատար ավտոմեքենա։ Տեխնիկական զինվածության այդ մակարդակը հնարավորություն կտա մեքենայացնել գյուղատնտեսական հիմնական աշխատանքները, բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, իջեցնել գյուղատնտեսական մթերքների ինքնարժեքը։

Հնգամյակի տարիներին հզոր վերելք կապրի նաև ավազանի արդյունաբերությունը։ Գործող ձեռնարկությունների արտադրական կարողությունների ավելացման հետ միասին կկառուցվեն տասնյակ նոր գործարաններ և արտադրական տեղամասեր։

---

21 Գյուղատնտեսության զարգացման մասին տվյալները վերցված են Սևանի ավազանի կոլտնտեսությունների և սովխոզների հնգամյա պլաններից։

22 Տե՛ս ՀԿԿ Կենտկոմի և Հայկական ՍՍՀ Մինիստրների Սովետի «Հայկական ՍՍՀ-ում գյուղատնտեսական կուլտուրաներից բարձր և կայուն բերք ստանալու համար հողերի մելիորացիան լայնորեն զարգացնելու մասին» 1966 թ. հուլիսի 20-ի № 307 որոշումը։

Բնական հարստությունների պլանաչափ կոմպլեքսային օգտագործման շնորհիվ Սևանի ավազանը դառնալու է Հանրապետության լեռնահանքային արդյունաբերության կարևոր շրջաններից մեկը։ Ներկայումս զգալի աշխատանք է տարվում Զոդի ոսկու հանքերի արդյունաբերական մշակման ուղղությամբ։ Մեծ աշխատանք է տարվում Սևանա լճի հյուսիս-արևելյան ափի՝ Շորժայի, Ջիլի և Բարաջանի տերիտորիայում հայտնաբերված մագնեզիումասիլիկատային ապարների զգալի պաշարների բաղայի վրա հրակայուն և կերամիկական առարկաների, կաղապարանյութերի արտադրության կազմակերպման ուղղությամբ։ Այդ նպատակով Շորժայում կառուցվելու է իր տեսակների մեջ Անդրկովկասում ամենախոշոր կոմբինատներից մեկը։ Հնգամյակի տարիներին երկաթուղագիծը Սևանից հասցվելու է Շորժա, որից հետո՝ մինչև Զոդ։ Կառուցվում է օղակաձև գազամուղ Սևանա լճի շուրջը, որի շինարարության ավարտումով ավազանի բոլոր շրջանները կստանան բնական գազ։

Հնգամյակի ամենախոշոր կառույցներից է Արփա-Սևան թունելի շինարարությունը։ 48 կիլոմետր երկարությամբ ճեղքվում է Վարդենիսի լեռնաշղթան, որպեսզի Արփա գետի ջրերը հոսեն դեպի Սևանա լիճը՝ պահպանելով նրա մակարդակը բնականին մոտ բարձրության վրա։ Արփա-Սևան թունելը ինժեներական բարդ և հազվադյուտ կառույց է, որի շինարարությունը ավարտվելու է հնգամյակի ընթացքում։ Այժմ արդեն փորված է 10 կիլոմետր։ Բացի այդ անտառապատվում են Սևանա լճից ապատված տարածությունները։ Արդեն անտառային խոշոր մասսիվներ են ստեղծվել Մարտունու, Կամոյի անվան, Բասարգեչարի շրջաններում։